



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20869

Ամենամեծն է

Ամենամեծն է ամեն օրիորդաց

հոգեւոր ուսման արարչին հայրս

Ազգայնականացում

Քիֆու

1883

114

560

# ՏԱՄՆԱՄԵՍԿ

ՍԱՀԱԿԱՆՈՒՂԵԱՆ ՕՐԻՈՐԳԱՅ

ՀՈԳԵԻՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ՀԱՅՈՑ

ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄԱԿԱՆ ԱՐԴԵՆՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

1883

42002

370

373  
U-15

2010

8352-12

373


4-15 370  
2464-ՏԱ

Տ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ

ՍԱՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐ. ՀՈԳԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ



Հ Ա Յ Ո Ց




ՍԿԻՋԲՆ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ

1873 թ. մարտ ամսի սկզբում Ալեքսանդրապոլի Հայոց Վիճակային Հոգեւոր եւ Արդութեան Օրիորդաց դպրոցների ուսուցիչները նոյն Վիճակային դպրոցի գահճիճում կազմեցին խառն մանկավարժական ժողով: Այս ժողովի մէջ խորհրդածութեան նիւթ եղաւ այն երեւոյթն, որ ուսման կարօտութիւն ունեցող եւ ցանկութիւն յայտնող մանկանց թիւն ամ ըստ ամէ անում է զգալի կերպով: այն ինչ մեր երկսեռ Հոգեւոր դպրոցները չեն կարողանում այդ առաւել եւ առաւել անեցող պահանջին բաւականութիւն տալ, եւ հարիւրաւոր մանկունք ամեն տարի յետ են ուղարկվում ուսման տաճարների դռներից: Ամենից ըզգալի օրինակը պատահած էր նոյն ուսումնական տարու սկզբում: Այսպիսի պահանջը գէթ մասամբ իւր լցուցանելու համար պ. Սարգիս Բէգնազարեանցը, տեսուչ Հոգեւոր Դպրոցի, առաջարկում էր մի տղայոց տարրական ուսումնարան բանալ քաղաքի աղքատ գասակարգի մանկանց համար սորա հակառակ՝ պ. Ղազարոս Աղայեանց, տեսչի պաշտօնակատար Արդութեան Օր. Դպրոցի, առաջարկում էր մի նոյնպիսի ուսումնարան բանալ օրիորդաց համար: Ժողովական ուսուցիչներից ոմանք մէկ, ոմանք միւս առաջարկութեանն էին համակրում, բայց առհասարակ ամենքն էլ զգայաւոր աչն տխրալի սպաւորութիւնից, որ թողել

էր նոցա սրտում ուսման փոփոգող մանաւանդ աղքատիկ մանկանց մերժումն՝ ոգեւորում էին այն մտքով, թէ հնարաւոր օգնութիւնը նոյն գործի մէջ չպէտքէ խրնայուի:

Վիճարանութիւնը երկար տեւեց: Տղայոց ուսումնարանի բացման մտքին համակրողները պատճառ էին բերում, թէ Արդութեան Օր. դպրոցը նոր բացուած լինելով՝ առ այժմ՝ բաւական է ժողովրդի պահանջը լցուցանելու, որ տակաւին այնքան մեծ չէ: Օրիորդաց ուսումնարանի բացման պաշտպանները յոյց էին տալիս, թէ՛ թէպէտ ուսման տրուող տղայոց թիւն աւելի մեծ է, բայց եւ դոցա համար կան քաղաքիս զանազան թաղերում մանր ծխական ուսումնարաններ, որոնք այսպէս թէ այնպէս բաւականութիւն են տալիս ցանկացողներին, այն ինչ ոչինչ տեղ չկայ սկզբնական կրթութեան՝ օրիորդների համար, մանաւանդ աղքատ գասակարգից, որին անմատչելի էր Արդութեան Օր. ուսումնարանի տարրական ուսման վճարի չափը (24 բ.): Աերջին պատճառներն աւելի յարգելի ճանաչուեցան, եւ ընդհանուր համաձայնութեամբ ժողովն որոշեց բանալ մի ծխական Օրիորդաց ուսումնարան քաղաքի հայ ազգի ժողովրդոց չբաւոր գասակարգի համար, ուր աշակերտուհիք բոլորովին ձրի պիտի ուսանին եւ ուսուցիչք ձրի պիտի ծառայեն: Սորանով վերջացաւ այն աւուր ժողովը:

Այս որոշման լուրը մեծ ուրախութիւն պատճառեց քաղաքիս մէջ մտածող մարդկանց: Այն ժամանակի յաջորդ Սիւրբիս վար-



դասակարգող (այժմ՝ Եպիսկոպոս եւ կառավարիչ Աժդարխանի թեմի) յայտնելով իւր շնորհակալութիւնն ու խնդակցութիւնը՝ խոստացաւ ամենայն դէպքում՝ աջակցել այս մտքի իրագործմանը: Նոյնպէս խոստացաւ օգնել աշակերտութիւններին կարեւոր դասական պիտոյքներով՝ քաղաքի մէջ քանի տարուց ի վեր կազմուած «Որբախնամ» կոչուած ընկերութիւր, որի ղեկավարներէց երկուոր նոյն իսկ սրտուով կայացնող ուսուցչական ժողովի անդամներէցն էին: Ազգատանոցի Հոգաբարձութիւնը եւս պատրաստակաճութիւն յայտնեց ամեն տարի իւր հաշուով 12 որդեգրուհիք պահել ուսումնարանում, տալով նոցա զգեստը:

Երեք օրից յետոյ ուսուցիչները միւս անգամ ժողով կայացրին, ուր հաստատեցին մտադրեալ ուսումնարանի բացման եւ շարունակութեան համար «Հիմնական» կանոնները: Այս ժողովի մէջ բաւականին լիճարանուեցաւ բանալիք ուսումնարանի անուան վերայ: Ուզում էին մի նոր յարմարւոր անուն գտնել. Հռիփսիմեան, Գայիանեան, Մարիամեան արգեն սովորական դարձած անուններ էին:

Մէկ միտք կար «Սահակոսեան» կոչել՝ յանուն ուսուցչուհի, բանաստեղծուհի եւ երգչուհի Սահակուխտ կուսին:\*) բայց այս անունը դժուարահնչիւն համարուեցաւ, ուստի որոշուեցաւ կոչել յանուն Մեծին Սահակայ գտեր եւ վարդան Մամիկոնեանի Մօրն՝ Սահականուշի:

Հաստատուած հիմնական կանոնները հետեւեալներն են.

- Ա. Նա պիտի լինի ծխական Հոգեւոր ուսումնարան յանուն «Աւագ Սուրբ Աստուածածնայ» Եկեղեցւոյ քաղաքի եւ գտանի Հոգեւոր իշխանութեան ժայրագոյն իրաւասութեան տակ:
- Բ. Նա պիտի կոչուի «Սահականուշեան Օրիորդական ուսումնարան Աղեքսանդրապօլս»:

\*) Այս Սահակուխտն էր քոյր հոգեւոր իմաստասէր և քերթող Ստեփաննոս Սիւնեաց Եպիսկոպոսի որ ապրում էր Ը. դարու սկզբում:

Գ. Նորա կառավարութիւնը քե ըստ ուսումնականի եւ քե ըստ տնտեսականի կախուած պիտի լինի հիմնարկու ուսուցչական խումբիս տնօրէնութիւնից, որի մասին, սակայն նա պարտաւորուած կ'լինի իւրաքանչիւր տարին նախ հաշիւ ներկայացնել Աղեքսանդրապօլս Հոգեւոր կառավարութեանը եւ այս սահմանուած ժամանակում բարեբաների ժողովին մասնաւորապէս, եւ հայագրի հասարակութեանը գրաւոր հրատարակութեամբ:

Դ. Բարեբաններին տարեկան տուրքի քանակութիւնը պիտի մնայ կամաւոր եւ ամենայն ոք նոցանից պիտի համարուի «Բարեբար անդամ» ուսումնարանի:

Ե. Բոյր աշակերտները պիտի լինին ջրաւոր ընտանեաց գաւակներ, ուսանին ճիշտաբար եւ լինին երթեւեկ:

Շ. Կարի ջրաւոր աշակերտութիւններին ուսումնարանի կառավարութիւնը կ'տայ դասական պիտոյքներ եւս, օգնականութեամբ քաղաքի «Որբախնամ ընկերութեան» նորա արդէն մէջ յայտնուած համաձայնութեամբ:

Չ. Ուսումնարանի մէջ դասաւանդութիւնը պիտի լինի առ հասարակ հայերէն լեզուով:

Ը. Բացուելի «Սահականուշեան Օրիորդական ուսումնարանի» մէջ աւանդի աւարկաներն պիտի լինին յետագայը:

- 1, Կրօն ըստ դասակարգեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ:
- 2, Մայրենի լեզու:
- 3, Առարկայական դասեր. (ընդհանուր գարգացուցիչ դասախօսութիւն):
- 4, Ռուսաց լեզու:
- 5, Թուաբանութիւն:
- 6, Վայելչագրութիւն:
- 7, Տարբեր նկարչութեան:
- 8, Ձեռագործութիւն եւ
- 9, Երգ:

Ուսուցչական խումբն այս հիմնական ծրագիրն յայտարարութեամբ ներկայացրեց յաջորդ Գերապետի Սիւրբաս վարդապետին մարտի 13-ին, խնդրելով նորա միջնորդութիւնը վեհափառ Կաթողիկոսի սուաջ՝ «Սահականուշեան» ուսումնարանի բացումն թոյլատրելու եւ կազմած կանոնները հաստատելու: Գերապետի Պարզեանը նոյն ամսոյ 19-ին ուսուցչաց յայտարարութիւնը եւ ներկայացրած ծրագիրը մատոյց նորին վեհափառութեան բարեհաճ թոյլտու-

թեանը: Հանգուցեալ վեհափառ Կաթողիկոսն Տէր Գէորգ Գ. բարեհաճեցաւ ներկայացրած ծրագրի վերայ մակագրել. — «Հաւան գտեալ ընդ պարունակութիւնս յօգուածոց հիմնական կանոնացս՝ թոյլատրեմք գործադրել սահմանեալն կարգու: 'Ն 27 Մարտի 1873 ամի, 'ի Ս. Էջմիածին. Թ. 139. (Իսկականի վերայ գրած) —

ԳԵՈՐԳ Գ. ԿԱԹՈՒԴՈՍՎԵՍՏՆԱՅՆ ՀԱՅՈՑ:

Այսպէս հաստատելով ուսուցչական խմբի ծրագրած հիմնական կանոնները՝ նորին վեհափառութիւնը տուաւ յանուն Գերապետի Սիւրբաս վարդապետի հետագայ կանգակը, 'ի պատասխանի նորա յայտարարութեան. —

«Գէորգ ծառայ Քրիստոսի եւ անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, բարեշնորհ Յաջորդի Աղէքսանդրապօլս լիճակի Սիւրբաս վարդապետի ծանուցանեմք ընթերցեալ զյայտարար գրութիւն ձեր ծանեաք զի ուսումնասէր ուսուցիչք երկուսն զպրոցաց Հայոց քաղաքիք երաշխաւորական ստորագրութեամբ տեսչաց իւրեանց ի յայտարարութեան եղելոյ 'ի գրութեանդ խնդրեն տալ ինքեանց զիրաւունս բանալոյ զօրիորդական ձրիաւորժ գպրոց վասն ազբատիկ աղջկանց ընդ հովանաւորութեամբ Սուրբ Աստուածածին Աւագ Եկեղեցւոյ յանուն Սահականուշոյ եւ ըստ հիմնական կանոնաց նորոգ յօրինելոյ յեթին յօգուածս՝ ուսուցիչք զգասախօսութիւնս ունին աւանդել ուսանողաց ազգասիրական եռանդեամբ ձրիաւորժ՝ ակնկալեալ երկնային վարձուցն հասուցման, լցուցանելով միանգամայն զկարի ջրաւորաց զուսումնական պէտս 'ի նուիրանաց Որբախնամ ընկերութեան տեղւոյք եւ զհաշիւս գործողութեաց իւրեանց տալ

ամբառ ամէ Հոգեւոր Կառավարութեան յաջորդութեանդ. ուստի բերկրեալ 'ի հոգի ընդ ջերմեանդ ազգային զգացմունքս նոցա եւ ձեր՝ այսու մերով Հայրապետական կոնդակաւ տամք զիրաւունս զձրիաւորժ Հոգեւոր Գպրոց Օրիորդացն յուսումն եւ 'ի յառաջագիմութիւն աղքատիկ եւ անոր Հայ Օրիորդաց եւ 'ի միութարութիւն սրտի մերոյ, հաստատելով եւ զնախագիծս կանոնաց ստորագրութեամբ մերով՝ վերադարձուցանեմք առ ձեզ: Եւ աղօթս առնեմք առ Աստուած վարձատրել զձեզ եւ զձրիաւոր գասախօսս եւ զնուիրատու բարեբարս յերկնից անապառելի գանձուց իւրոց եւ մտղթեմք յամենաւատ ողորմութեանց նորա տպաւորել 'ի սիրտս իւրաքանչիւր հայորեոյն զհոգի Աստուածսիրութեան եւ ազգասիրութեան, եւ զօրացուցանել զամենսին հոգւով աստուածպաշտութեան եւ բարեգործութեան, որպէս զի լինելով բնաւից ուսեալք յԱստուծոյ արժանասցին վայելել զշնորհս մարդասիրութեան նորա եւ երկնաւոր վարձուցն, զորս խոստացեալ է Տէրն ամենայն բարեգործաց եւ Հայաստան զգեցցի զկենդանութիւն վերանորոգեալ ի սգայի աւերակացն: Ողջ լերուք Տերամբ»: (Իսկականի վերայ գրած) Գէորգ Գ. Կաթողիկոս ամենայն Հայոց: Յամի փրկչական 1873 եւ Ազգական ոչիր. 'ի 27 Մարտի—'ի Ս. Էջմիածին. Թ. 139»:

Կարճ միջոցից յետոյ, այն է Ապրիլի 16-ին, Աղէքսանդրապօլս Հոգեւոր Կառավարութիւնից ստացուեցաւ հետեւեալ առաջագրութիւնը. —

«Հրաման նորին Կայսերական Մեծութեան Խնդնակալին ամենայն Ռուսաց 'ի Հոգեւոր կառավարութեան Հայոց Աղեքսանդրապօլս բարեջան ուսուցչաց երկուսն զբարոցաց Հայոց Աղեքսանդրապօլ քաղաքի ըստ հրամանի նորին Կայսերական Մեծութեան 'ի Կառավարութեանս լուան զՅառաջագրութեան Տէր Փոխանորդի լիճակիս յ'ն ապրիլի տարւոյս, համարաւ 27, յորում գրի այսպէս. «Մայրագոյն Պատրիարք

Կաթուղիկոսն ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Գ. 'ի հետեւումն յայտարարութեան մերոյ 'ի 19-ն Մարտի անցելոյ համարաւ 19, որով մատուցեալ էաք 'ի հաստատութիւն զճրագիր կանոնաց նորոգ բանալի Սահականուշեան Օրիորդական ձրիավարժից ուսումնարանի 'ի միասին ընդ յայտարարութեան ուսուցչաց երկսեռի դպրոցաց քաղաքիս, հայրապետական կոնդակաւն տուեցելով յանուն մեր 'ի 27 մարտի թուահամարաւ 139, բարեհաճեալ է տալ զիրաւունս բացման նորոյ Օրիորդական հոգեւոր ուսումնարանի ընդ հոլանաւորութեամբ Աւագ Ս. Աստուածածին եկեղեցւոյ տեղւոյս, հայրօրէն սրտի բերկրութեամբ խնդամտելով ընդ բարենպատակ ձեռնարկութիւնս ազգասէր երիտասարդացն: Որովհետեւ ըստ տրամադրութեանց երրորդ յօդուածոյ կանոնաց Սահականուշեան վարժարանին կառավարութիւն նորին պարտաւորի յամի ամի ըստ տնտեսական եւ ուսումնական մասանց հաշուատու լինիլ Կառավարութեանդ, եւ այսպիսի համազգային հաստատութիւնը յետ բազմամեայ ժամանակաց առաւել պատկառելի լինելով յայս ժողովրդեան շարժին զհետաքրքրութիւնս նոցին 'ի ծանօթութիւն սկզբնական պատճառայն եւ բարերարաց բացմանն, վասն որոյ պատշաճ վարկաք զմեծի Քահանայապետին Ազգիս զիսկական կոնդակ հանդերձ վաւերական պատճէնիւք յայտարարութեան ուսուցչաց երկսեռի դպրոցացն եւ հաստատեալ ճրագրոյ կանոնացն ընդ սմին առաքել Ատեան Դոբին իբրեւ, 'իտեւական ատենատեղի հոգեւոր վասն ունելոյ 'ի գործս եւ վասն տալոյ զժապաւինեալ մատեան մի բարեխոհ ուսուցչացն առ 'ի գրել 'ի նմին զկամաւոր նուիրանս բարեպաշտօն հասարակութեան Հայոց, որով եւ սկզբնաւորելոյ զգործն ազգաշահ» №16: Հրամայեցին նախ կազմել 'ի սմին զնոր գործ, զոր շարունակել կարգաւ, երկրորդ կոչեալ յԱտեան Կառավարութեանս զՊրն. տեսուչս եւ զուսուցիչս երկսեռ դպրոցաց քաղաքիս յայտնել ձեզ զհաստատութենէ հիմնական

կանոնացն՝ առաջագրել ձեզ այժմէն իսկ ընդ փոյթ բանալ գպրոցն օրիորդական եւ շարունակել 'ի նմին զհաստատութիւն չբաւոր հայազգի օրիորդաց, երրորդ կազմել զմի ժապաւինեալ տոււար 'ի միասին ընդ վաւերական պատճէնիցն Կոնդակի, ճրագրոյ եւ այլոց թղթոց առաքեալ առ ձեզ յազգս կազմելոյ 'ի գպրոցին զհիմնական գործս, գրելոյ 'ի տոււարին զկամաւոր նուիրատուութիւնս բարեպաշտից, նոյնպէս եւ զճախ գպրոցին եւ յաւարտ տարւոյս առաջի առնել սմին 'ի վերազննութիւն եւ տալոյ ձեզ յամ ըստ ամէ զնոյնպիսին, գրելով 'ի վերայ ձեր զյատուկ պարտաւորութիւն ջանագիր լինել որպէս վասն բարեկարգութեան եւ յառաջագիմութեան ուսանողաց եւ 'ի նմին, նոյնպէս եւ ընդունել զաշակերտուհիս միանգամայն 'ի չբաւոր գերգաստանաց, եւ այն վկայութեամբ ծխատէր քահանայից նոցին. առ որ հրաւիրել զառանձին իմն մտադրութիւն ձեր, զի ընդունելութիւն եւ ընտրութիւն աշակերտուհեաց լինիցի գիտութեամբ Բարեջան Հոգաբարձութեանն Աղքատանոցի քաղաքիս եւ միանգամայն այնպիսի զգուշաւոր կարգաւ, զի մի յապայն ծագեսցի զըջումն արարմանց, աւելորդաբանութիւն ժողովրդոց, եւ որ մեծն է՝ խղճահարութիւն ընդդէմ արդարութեան եւ արժանաւորագոյն գատելաց: Զվերոգրելոյն ամենից ամենախոնարհաբար յայտնել 'ի գիտութիւն Վեհաստիճան Քահանայապետի Ազգիս: 'ի 16-ին Ապրիլի 1873 ամի, յԱղէքսանդրապոլ: Հմր. 760. (իսկականի վերայ գրած է) Անդամ Կառավարութեան Յովակիմ Առաջագահայ Կոստանայ:

Ուսուցչական ժողովն իսկոյն կարգադրութիւններ արաւ աշակերտուհիների ընտրութեան եւ ուսումնարանական տան համար: Վարձուեցաւ Պ. Նազարէթ Վեքիլեանցի տունը տարեկան 120 բուրլի վարձով: Աշակերտուհիների ընդունելութեան օրը նշանակուեցաւ Մայիսի 6-ը, որի համար կանխաւ

գրաւորապէս խնդրուեցաւ քաղաքիս Գեւորտատներից, Աղքատանոցի Հոգաբարձութիւնից եւ հոգեւորական դասից՝ նշանակած օրը ներկայացուցիչներ ուղարկել իւրեանց կողմից Հոգեւոր գպրոցի դահլիճն, որպէս զի աշակերտուհեաց ընտրութիւնն կատարուի անսխալ կերպով եւ արդարութեամբ: Կազմուեցաւ խնդրատուների ցուցակ, որի մէջ մանրամասն նշանակուեցան աշակերտացուների տարիքը, ծնողաց պարագմուհիք, կարողութիւնը, եւ որ քահանայի ծուխ լինելը՝ Յիշեալ ցուցակին համեմատ մինչեւ ընդունելութեան օրը, այսինքն Մայիսի 6 ր, ցանկացողների թիւնը հասաւ 123-ի:

Նշանակած օրը հասաւ մեծ բազմութիւն էր ժողովուել Հոգեւոր Գպրոցի սրահում, ըստ մեծի մասին կանայք: Ընդունելի աշակերտուհեաց վերաբերմամբ որոշուած էր. 1, 8 տարեկանից փոքր եւ 12 տարեկանից մեծ աղջիկ չընդունել. 2, ընտրութիւնը կատարել լինակով. 3, Քաղաքիս Աղքատանոցի ընդունած 12 որդեգրուհիներին նոյնպէս եւ ուրիշ անձանց որդեգրուհիներին առհասարակ ընդունել առանց լինակի. 4, ուսումնարանի աշակերտուհիներին հանգերձ չտալ. բայց Արքայնամ ընկերութեան օժանդակութեամբ տալ կարօտութիւն ունեցողներին գասական պիտոյք:

Այսպէս, լինակի ենթարկուեցան 73 օրիորդ, որոնցից ընդունուեցան միայն 22 օրիորդ, իբրեւ որդեգրուհիներ: Ով կարող է նկարագրել այն սրտայոյզ տեսարանը որ բացուեցաւ ընդունելութիւնը վերջանալուց յետոյ՝ մերժուածների կողմից:

Մինչ այս մինչ այն Պ. Ս. Բէգնազարեանը Հոգեւոր իշխանութիւնից տուած ժապաւինեալ մատեանը ձեռքին պտրտում եւ նուէրներ էր հաւաքում: Ժողովուրդը մեծ համակրութեամբ էր նայում այս գործի վերայ եւ խրախուսում էր ուսուցիչներին, որոնք առանց մի կոպէկի, լոկ յուսով կազմուրուած՝ ձեռնարկել էին այդ ծանր գոր-

ծր: Մեծ քաջալեր եւ գորալիզ էր նոցա համար եւ Գերապատիւ Պարզեանի համակրութիւնը, որ մինչեւ անգամ գրած էր իւր հեռաւոր ծանօթներին որ եւ է կերպով օգնել ձրիավարժից նորաբաց կարօտաւոր ուսումնարանին, եւ ամեն մի յարմար գէպքում խրախուսում էր նոցա ջանքերը. օրինակ՝ ուղարկելով ուսումնարանի Վարչութեանն Պ. Նիկողայոս Տէր Յակովբեանից յիսուն բուրլի գրամ, 50 օրինակ «Մայրենի լեզու» եւ 20 օրինակ «Թուաբանութեան ձեռնարկ» գրքոյկներ ստացած նուէրն իւր գրութեան վերջը յաւելում է այս գեղեցիկ խօսքերը. «Հապա ժրագարուք 'ի վաստակուհոգեւոր մշակութեան՝ ձեռք ժրաց զօրացուցանեն զտկարութիւնս ձեր 'ի դրամական պէտս: Երկինք վարձատրեսցէ զառաքինութիւնս նոցին, իսկ ապագայք ձեր 'ի ժամանակի հնձոց քաղցրաճաշակ պտղոցն գաստիարակութեան կեանս՝ 'ի խոնարհ երկրէ ընդ վերաթուրոցդ յերկինս առ հասարակ ցնծաջիք. զի մի է կետ երկոցունցդ ջանից՝ զմարդն բարոյական հրահանգօք պատրաստել յօրինաւոր անդամակցութիւն ընդարձակ գերգաստանի երկնաւոր Հօրն, որ զկատարելութիւն պահանջէ յիւրոց որդւոց»: 6-ին Յունիսի 1873 ամի, յԱղէքսանդրապոլ:

Այժմ՝ յառաջ եկաւ մի գժուարութիւն: Վարչութիւնը չէր կարողանում գտնել յարմարաւոր վարժուհի: Վերջապէս վարչութեան անդամներից մինը՝ Պ. Աղաբէգ Արշակունի յանձն առաւ գալ բնակիլ ուսումնարանի սենեակներում, որով եւ նորա ամուսինն Տիկին Եղիսաբէթ Արշակունի կարող կը լինէր կատարել վերակացուհի վարժուհու պաշտօնը եւ սովորեցնել ձեռագործութիւն ընդ հսկողութեամբ եւ առաջնորդութեամբ Արղութեան ուսումնարանի վարժուհւոյ տիկին Զարուհի Գիւլումեանցի: Այսպէս եւ տնօրինուեցաւ Տեսչական պաշտօնը յանձնուեցաւ Պ. Մկրտիչ Արաբաջեանցին, որ նոյն միջոցին ամենից աւելի հեշտութիւն

ունէր այդ պաշտօնը կատարելու:

- 1, Մինաս քանանայ Տեր Խաչատրեանց
- 2, Մկրտիչ Արաբաշեանց
- 3, Աղաբեգ Արշակունի եւ
- 4, Ղազարոս Աղայեանց
- 5, Աարգիս Բեգնազարեանց
- 6, Հայրապետ Ղուկասեանց
- 7, Աբգար Գիւրումեանց (այժմ Մեսրոբ քանանայ)
- 8, Տիկին Զարուհի Գիւրումեանց
- 9, Տիկին Եղիսաբէր Արշակունի՝ օգնական վարժուհի եւ վերակացուհի:

Սորա ամենեքեան յանձն առին ծառայել ձրի: (Բացառութեամբ տ. Արշակունեոյ, որ պէտք է ստանար բնակարանից զատ տարեկան 100 ռուբլի ռոճիկ.)

Ընդունուած յիսուն աշակերտուհիք ամենքն էլ անգրագէտ էին, սորա կազմեցին մի պատրաստական դասատուն. ուսումնարանն բացուեցաւ 1873 թ. Մայիսի 20-ին, Հոգեգալտեան տօնի օրը:

«Արարատ» ամսագրի թղթակից Հանգուցեայ Յովհաննէս Մուշեղեանցն—այսպէս է նկարագրում այդ բացման համեստ հանդէսն. —այսօր ճաշու Ս. Պատարագից յետոյ տեղւոյս Ս. Նշան Եկեղեցւոյ մէջ արժանապատիւ Յաջորդն մեր խօսեցաւ մի գեղեցիկ համառօտ ատենաբանութիւն որով միաբանութեան օգտակարութիւնն ցոյց տալով կ'հրաւիրէր զժողովուրդըն միաբան սրտիւ աշխատել միշտ մտաւոր զարգացման միջոցների վերայ: Սուրբ սեղանոյն բոլորը շարուած էին կարգաւ տեղւոյս Ղազարամանեան Օրիորդական գրպոցի աշակերտուհիք եւ կերպէին եկեղեցական երգերն, ապա եւ սոցա վերայ յաւելան յիսունի չափ մատաղատի Հայ աղջկունք, որոնք բնարուած էին արդէն քաղաքիս ազգային գերդաստաններից Սահականոյշ նոր գպոցի մէջ դաստիարակուելու նպատակաւ: Երբ ժամերգութիւնն աւարտեցաւ, բոլոր աշակերտուհիք իւրեանց ուսուցիչներին, ուսուցչուհիներին եւ հոգեւորական դասու հետ գիմեցին գէպի նոր գպոցն աղջկանց, ընդնոսին եւ քաղաքացի պարոններ եւ տիկիներ: Արժ. Յաջորդն երբ մայթանքըն եւ օրհնութիւնն վերջացրուց, Ղազարամանեան Օր. Գպոցի աշակերտուհիք երգեցին գեղեցիկապէս «Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր» ազգային երգն: Ապա Հոգեւոր Գպոցի ուսուցիչ Պ. Մկրտիչ Արաբաշեանցն կարգաց մի գեղեցիկ ճառ, որով կ'բացատրէր դաստիարակութեան նշանակութիւնն. հոսկ յետոյ Հոգեւոր գպոցի Տեսուչ Պ. Բէգնազարեանցն ընթերցաւ յարգելի Պարոնների եւ Տիկիներին անուանքըն, որոնք նիւթապէս նպատամատոյց եղան նոյն գպոցին. այդ նուիրատուութեանց գումարն այժմս կ'հասնի մօտ 500 ռուբլու: Ի շարս նուիրատուաց ուշագրութեան արժանի են Պ. Ղազար Աղայեանց Ղազարամանեան Օրիորդաց գպոցի Տեսուչն, որ Սահականոյշ գպոցին մէջ բացի ձրի դասախօսութիւն յանձն առնելուց՝ կ'նուիրէ Ի նպատակ նոյն գպոցին գրքեր իւր աշխատութիւն եւ թարգմանութիւն 100 ռուբլի արժողութեամբ: Ենորհակալութիւն հրապարակաւ Պարոնին, որ գործով ազգային մանկուոյն յառաջողիմութեան գովելի օրինակ կ'ներկայանայ: Արքայինամ անդամներն նոյնպէս նուիրած են 50 ռուբլւոյ արժողութեամբ գրքեր, քաղաքիս աղքատանոցի Հոգաբարձութիւնն եւս խոստացել է տասնեւերկու օրգեգրուհի անենալ այդ գպոցի մէջ եւ այլն»:

Դասերը բաժանուեցան հետեւեալ կերպով.—

- Կրօն.
- Բարոյախօսութիւն.
- Հայոց Լեզու.
- Առարկայախօսութիւն.
- Թուարանութիւն.
- Գրութիւն եւ երգ.
- Ձեռագործութիւն.

րամանեան Օր. Գպոցի աշակերտուհիք երգեցին գեղեցիկապէս «Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր» ազգային երգն: Ապա Հոգեւոր Գպոցի ուսուցիչ Պ. Մկրտիչ Արաբաշեանցն կարգաց մի գեղեցիկ ճառ, որով կ'բացատրէր դաստիարակութեան նշանակութիւնն. հոսկ յետոյ Հոգեւոր գպոցի Տեսուչ Պ. Բէգնազարեանցն ընթերցաւ յարգելի Պարոնների եւ Տիկիներին անուանքըն, որոնք նիւթապէս նպատամատոյց եղան նոյն գպոցին. այդ նուիրատուութեանց գումարն այժմս կ'հասնի մօտ 500 ռուբլու: Ի շարս նուիրատուաց ուշագրութեան արժանի են Պ. Ղազար Աղայեանց Ղազարամանեան Օրիորդաց գպոցի Տեսուչն, որ Սահականոյշ գպոցին մէջ բացի ձրի դասախօսութիւն յանձն առնելուց՝ կ'նուիրէ Ի նպատակ նոյն գպոցին գրքեր իւր աշխատութիւն եւ թարգմանութիւն 100 ռուբլի արժողութեամբ: Ենորհակալութիւն հրապարակաւ Պարոնին, որ գործով ազգային մանկուոյն յառաջողիմութեան գովելի օրինակ կ'ներկայանայ: Արքայինամ անդամներն նոյնպէս նուիրած են 50 ռուբլւոյ արժողութեամբ գրքեր, քաղաքիս աղքատանոցի Հոգաբարձութիւնն եւս խոստացել է տասնեւերկու օրգեգրուհի անենալ այդ գպոցի մէջ եւ այլն»:

Այս միջոցին ուսումնարանի Վարչութիւնը ցանկալով, որ երբեւիցէ որեւէ կասկած կամ տարապարտ խօսք ու գրոյց չլինի ուսումնարանի անտեսական կառավարութեան եւ ճիշտ հաշուեկարութեան վերաբերմամբ՝ բարւոք համարեց որ գանձա-

պահի պաշտօնը յանձնուած լինի միշտ ժողովրդի միջից ընտրած մի վարի ու համարմունք վայելող անձի: Այս հիման վերայ վարչութիւնը խնդրեց յանձն առնուլ գանձապահութիւնը Պ. Յովհաննէս Սահարատեանցին, որ եւ համաձայնուեցաւ ուրախութեամբ:

Այսպէս հիմնուեցաւ ու կազմակերպուեցաւ աղքատիկ Հայ օրիորդաց համար այս ուսումնարանը—պտուղ յոսոյ եւ աշխատանոց ուսուցչաց կողմից եւ համահրուկրութեան ու օգնութեան՝ ժողովրդի կողմից:

Սորանից յետոյ նա զօրացաւ ու շարունակուեցաւ մինչեւ այսօր, ամբողջ տասն տարի, միայն մի տարի 1877 թ. ինչպէս եւ ուրիշ ուսումնարաններ, փակ մնաց՝ վերջին Ռուս—Թուրքական պատերազմի յառաջացած զժուարութեանց պատճառով՝ հակառակ վարչութեան ցանկութեանը:

Այս տասնամեայ ժամանակամիջոցում արգարեւ գտնվում էին անձինք, որ կասկած էին յայտնում ուսումնարանի հաստատութեան ու տեսականութեան վերայ, ըստ որում նա պահպանվում էր լսի մի քանի ուսուցչաց ձրի աշխատութեամբ. իսկ այդպիսի եռանդը կամ անձնուիրութիւնը գիւրաւ կարող էր դադարել այս կամ այն պատճառով. եւ ահա ուսումնարանը պիտի փակուէր հարկաւ, չունելով ոչինչ նիւթական հաստատ ապահովութիւն: Այլին մինչեւ անգամ անձինք, որոնք կասկածամտութիւն ներշնչելով այլոց մէջ՝ ամենեւին գրգուած չէին առ այս բարի ձգտումներից: Սակայն՝ այս ամենը չկարողացաւ վնասել ուսումնարանի գոյութեանն, ըստ որում համահրոզների թիւը մեծ էր եւ վարչութեան հաստատամտութիւնը տոկուն:

Թէպէտ եւ առանձին այս գրուածքի վերջը պէտք է ցուցակագրուի ուսումնարանի տասնամեայ ելեւմտից հաշիւը, բայց թող յառաջ բերենք այստեղ զանազան ժամանակներում ՚ի պաշտպանութեան ուսում-

նարանի եղած զգալի օգնութիւններն, որպէս ապացոյց թէ յիսունի հասարակութեան համահրութիւնն ու հաւատք քանի գնում՝ աւելանում էր գէպի այդ կարեւոր հաստատութիւնը:

1, Երեւանցի Պ. Ստեփան Երեմեանց 1874 թ. Սեպտեմբերի 12-ին ուղարկեց Վարչութեանը մի հարիւր ռուբլի հետեւեալ գրութեամբ.— «Ի նշան սիրոյ եւ շնորհակալութեան Ալեքսանդրապօլում բնակող ընկերներիս, նուիրում եմ Սահականուշեան Օրիորդական ուսումնարանին հարիւր ռուբլի»:

2, Ալեքսանդրապօլում մէջ քանի մի տարի առաջ սկսուած «Արքայինամ» կոչուած ընկերութեան կառավարիչներն՝ ինն հոգի նուիրատու անձանց հաճութեամբ եւ Հոգեւոր Կառավարութեան միջոցով, այսինքն պատճառական ճանապարհով, գարձուցին յօգուտ ուսումնարանին իրանց մօտ աւելացած գումարն 700 ռուբլի, այն պայմանով, որ անձեռնմխելի մնայ սորանից 400 ռուբլին, որ Վիճակային Հոգեւոր Գպոցի սեպհական 400 ռուբլու հետ միասին պէտք է գործադրուի գպոցական գրախանութի մէջ, որպէս զի գոյացած արգիւնքից հոգացուին անխտրաբար երկու գպոցների օրոց եւ չբաւորաց ուսումնական կարիքները՝ համաձայն նուիրատուաց սկզբնական նպատակին:

3, Հանգուցեայ Սիրական—տղա Գորոյեանցն մահուանից առաջ կտակեց յօգուտ ուսումնարանի 200 ռուբլի, եւ ստացուեցաւ գրեթէ երկու տարի յետոյ՝ կտակակատարների ցանկութիւնից անկախաբար յառաջացած զժուարութեանց պատճառով:

4, Հանգուցեայ Արշակունի Նալեանցն մահուանից առաջ կտակել էր 200 ռուբլի, որ մնում էր հանգուցելոյ եղբարց մօտ տոկոսով մինչեւ անցեալ 1882 թ. Սեպտեմբեր ամսին:

5, Հանգուցեայ Մանուկ Արշակունի մահուանից առաջ 1878 թ. կտակեց յօգուտ ուսումնարանի 200 ռուբլի, որ մատոյց Վար-

չութեանը նորա ամուսին Տիկին Քայի Արշակունին նոյն թուի Ապրիլի 6-ին:

6. Պատերազմի ժամանակ քաղաքի մէջ կազմուած սենեկացոյց մասնաժողովը 1878 թ. Ապրիլի 22-ին, համաձայն հասարակական վճռոյ՝ ուղարկեց յօգուտ Ուսումնարանին՝ 340 ռուբլի:

7. Պարոն Աւետիք Բարտաշեանց ՚ի նշան իւր համակրութեան առ Սահականուշեան ուսումնարանն նուիրեց յօգուտ նոյն ուսումնարանի Սեպտեմբերի 26-ին 50 ռուբլի:

8. Հանգուցեալ Յովհաննէս Մկրտչեանցն մահուանից առաջ կտակեց յօգուտ Ուսումնարանի 50 ռուբլի, որ եւ մատուցին վարչութեանն նորա եղբարք Սահակ եւ Կարապետ Մկրտչեանք:

9. Պարոնայք Կարապետ եւ Տիգրան Տիգրանեանք իւրեանց հանգուցեալ—եղբոր Վարդանայ յիշատակն մի բարեգործութեամբ մշտնջենաւորելու համար, նուիրեցին ուսումնարանին 400 ռուբլի, որ եւ մատուցին Վարչութեանն 15-ն Յունվարի 1879 ամի:

10. Եղբարք Յովհաննէս, Հաջիպապ եւ Մկրտիչ Իսպիրեանք ՚ի յիշատակ իւրեանց հանգուցեալ եղբորն՝ Տիգրանայ 1879 թ. Դեկտ. նուիրեցին 40 ռուբլի:

11. Պ. Վաչերիան Շահգուբաթեանց նուիրեց յօգուտ ուսումնարանին 1879 թ. Դեկտեմբերի 31-ին 150 ռուբլի:

12. պ. պ. Մահտ. Գէորգ եւ բժիշկ Աւետիք Բարայեանք ՚ի յիշատակ իւրեանց հանգուցեալ մօրն՝ Մարգարտի՝ նուիրեցին յօգուտ ուսումնարանի 100 ռուբլի 1879 թ. Սեպտեմբերի 1-ին:

13. Հանգուցեալ Մահտեսի Մկրտիչ—աղա Բարայեանցն մահուանից առաջ կտակեց յօգուտ ուսումնարանի 250 ռուբլի. որ եւ մատուցին հանգուցելոյ որդիքն պ. պ. Գէորգ եւ բժ. Աւետիք Բարայեանք 1880 թ. Մարտին:

14. Արրահամ Մատակեանց նուիրեց յօգուտ ուսումնարանի մի հատ 100 ռուբլիանոց Արբունի զբամանոցի 5% տոմսակ Ա.

րեւելեան երկր. փոխառութեան 1880 թ. Ապրիլի 18-ին:

15. պ. Եղիազար Սանոյեանց նուիրեց—յիշատակ իւր հանգուցեալ ամուսնոյն՝ Շողակաթայ 40 ռուբլի, 1880 թ. Յունիսի 14-ին:

16. պ. Յովհաննէս Միրաբեանցը աւարտելով ուսման ընթացքը Թիֆլիսու Ռէալական ուսումնարանում ՚ի յիշատակ այս ուրախաբիթ յաջողութեան 1880 թ. Յունիսին նուիրեց ուսումնարանին 40 ռուբլի:

17. պ. Յովհաննէս Ելագեանց 1881 թ. Յունուարի 15-ին մատուցանելով 25 ռուբլի, խոստացաւ տարուց տարի 25-ական ռուբլի նուիրել յօգուտ ուսումնարանի, որեւ կատարում է մինչեւ հիմայ:

18. Քաղաքային Դեպուտատներն 1881 թ. Նոյեմ. 18-ին գրութեամբ ուղարկեցին վարչութեանն 403 ռուբլի 50 կոպէկ, համաձայն հասարակական ժողովի վճռին\*):

19. պ. Յովհաննէս Սիմեօնեանց իւր անուան յիշատակի համար, նուիրեց ուսումնարանին 1882 թ. Յունուարի 8-ին 20 ռուբլի:

20. Մահտեսի Կարապետ Իւզբաշեանց ՚ի մշտնջենական յիշատակութիւն իւր՝ նուիրեց ուսումնարանական տան ինութեան փայտեղէն ծախուց համար 1087 ր. 50 կոպէկ, 1882 թ. Ապրիլին:

21. պ. պ. Յովհաննէս, Մկրտիչ եւ Կա-

\* Այս գումարը ժողոված էր Ռուբինեան Ամբրոսիոս Վարդապետի Բանալիք Երկրագործական դպրոցի համար նորա ներկայութեամբ և թողնուած էր ժողովարարների մօտ ց'պահանջ: Բայց երբ յիշեալ դպրոցի բացումն շատ տարակուսելի երեւեցաւ, նուիրատու հասարակութիւնը բարեօրհան համարեց նոյն գումարը յանձնել Սահականուշեան Օրիորդական ուսումնարանին այն պայմանով, որ երկը տարի պահէ իրրեւ աւանդ, և եթէ մինչև այդ ժամանակ գեր. Ռուբինեանը փաստերով կապացուցանէ թէ յիշեալ Դպրոցը բացուեցաւ՝ դարձնել նորան 403 ր. 50 կոպէկ գումարն, իսկ եթէ ոչ, այդ գումարը մնայ անդառնալի սեպհականութիւն Սահականուշեան ուսումնարանի:

րապետ Տէր Դաւթեանք ՚ի յիշատակ իւրեանց հանգուցեալ հօր՝ Դաւիթ ա. քահանայի նուիրեցին ուսումնարանին 1882 թ. Մայիսի 26-ին 100 ռուբլի:

22. Մահտեսի Գիւզալ Ասանթթեանց նոյն շինութեանն օգնելու նպատակաւ ՚ի յիշատակ իւր հոգւոյ նուիրեց 1882 թ. Հոկտեմ. 7-ին 100 ռուբլի:

23. Հանգուցեալ Արրահամ Ունջեանց մահուանից առաջ կտակեց յօգուտ ուսումնարանին 200 ռուբլի, որ եւ մատուց Վարչութեանն 1882 թ. Նոյեմ. 11-ին նորա ամուսին Տիկին Քայիանէ Ունջեանցն:

Այսչափս այստեղ թող բաւական համարուի թէ բարերար անձանց պատուաւոր յիշատակի եւ թէ հասարակութեան համակրանաց ապացուցի համար:

Աւելորդ չէ յիշել նաեւ, որ ամենայն յարմարաւոր դէպքում եւս հասարակութիւնը ցոյց է տուել առանձին պատրաստականութիւն նպաստելու ուսումնարանին: Ուսուցչական խմբի տուած թէպտրոնական ներկայացումները, տարեկան հարցաքննութիւններից յետոյ կատարուած վիճակախաղերը, որ ուսումնարանական եկամտից գլխաւոր աղբիւրներն են եղած, երբէք անտես չեն արուած հասարակութեան կողմից: Նոյպէս եւ ուսուցիչներն երկու անգամ «Աւետիս» ման գալիս եւ վերջին անգամ ուսումնարանական տան շինութեան համար նուիրատուութեան մատենը ման ածելիս, նա չէ մերժել իւր օժանդակութիւնն ըստ կարողութեան: Մինչև անգամ Ռուս թատերասիրաց խումբը ժամանակ ժամանակ մտաբերէլ է Սահականուշեան ուսումնարանը: Այդպէս էլ 1878 թ. ձմեռը Քաղաքային Կրթութեան անդամներին իրանց ազատ ժամերի զբաղմանաց առատ արդիւնքից բաւականին մասն հանեցին նորան:

Այսպէս ահա Աղէքսանդրապօլու Հայ հասարակութիւնն իւր արժանաւոր ուշադրութեամբ միշտ քաջալերել է Սահականուշեան ուսումնարանի պաշտպանութեան գործում

նոյն ուսումնարանի Վարչութեան ճգունքը. Վարչութեան, որ միշտ շնորհակալու զգացմունքով պիտի յիշէ այդ իւր համար թանկագին համակրութիւնը:

Բ.

Ուսման կարգադրութիւնք յրեքացս տասն ամաց (1873—1883 ր.)

Ա). Առաջին իսկ տարու սկզբում Վարչութիւնը տեսնելով, որ ընդունուած աշակերտուհեաց մէջ կան ոմանք գրագիտութեամբ եւ հասակով աւելի բարձր միւսներին, որոշեց կազմուած պատրաստական դասարանը բաժանել երկու բաժանմանց—գրագէտների եւ անգրագետների: Առաջին մէջ թուով քիչ էին աշակերտուհիք, երկրորդի մէջ շատ: Երկու բաժանմանց հետ էլ մի ժամանակ պարապում էին նոյն սենեակում: Զեռագործութիւնը, Երգեցողութիւնը, Աւարկայախօսութիւնը եւ Բարոյակրթական պատմութիւններն ընդհանուր էին երկու բաժանմանց համար:

Դասատուութիւնը շարունակուեցաւ մինչև Յունիսի վերջն: Այնուհետեւ Յունիս եւ Օգոստոս ամիսներին ուսումն առ ժամանակ դադարեցաւ եւ Սեպտեմբերի ամիսն նորից սկսուեցաւ:

Տարուան սկզբում ընդունուած էին որոշ թիւ աշակերտուհեաց—50 հոգի, բայց տարուան մէջ ըստ առանձին թախանձանաց ընդունուեցաւ մի հոգի եւս: Այս 51 հոգուց 1873—74 ուսումնական տարու հրապարակական հարցաքննութիւններից յետոյ՝ 14 աշակերտուհի գրագէտների բաժանմանից արժանի համարուեցան փոխուել Ա. Դասարան: Սակայն Ա. դասարան բանալու համար նիւթական միջոցներն էլ պէտք է աւելանային. իսկ ըստ հիմնական կանոնաց՝ Վարչութիւնն միայն ձրի աշակերտուհիք պիտի ընդունէր եւ տղքատ դասակարգից: Այս դժուարութեան առաջն առնելու համար Վարչութիւնն ստիպուած էր մի նոր



իրաւունք խնդրել Հոգեւոր իշխանութիւնից, որ խնդրեց եւ ստացաւ, ինչպէս կը տեսնենք իւր տեղը:

Բ). Ա. դասարանն բացուեցաւ Հետեւեալ 1874/75 ուսումնական տարին:

Դասարանը փոխած աշակերտութիւններից 4 հոգի այլ եւս չկամեցան շարունակել ուսումն' անական հանգամանքներով. մնացին Ա. դասարանում 10 հոգի. իսկ Պատրաստականում որ դարձեալ երկու բաժանումն ունէր, նոր ընդունուածների հետ միասին եղան 60 հոգի: Ընդ ամենը 70 աշակերտութիւն:

Հին ուսուցիչներից թողին իրանց պաշտօնը Պ. Արգար Գիւլումեանց եւ իւր ամուսինն տիկին Զարուհի Գիւլումեանց՝ քաղաքից բացակայելու պատճառով: Աւսումնական տարու վերջը Վարչութիւնը տարաբաղգաբար զրկուեցաւ իւր հիմնադիր անդամների մէկից—Մինաս քաջանայ Տէր Խաչատրեանցից, որի մահն առհասարակ զգալի կորուստ եղաւ տեղական Հոգեւոր Աւսումնարանների համար: Նոր դասեր յանձն առին Օր. Եւփիմէ Պետրովա, վարժուհի Արզուսեան Օր. Աւսումնարանի (վարձով) եւ պ. պ. Աղաբէգ Ամիրեանց, Յարութիւն Տէր Սարգսեանց, Մակար Տէր Սարգսեանց, Նազարէթ Նաւբանդեանց (այժմ Արիստակէս քաջ.) եւ Աղէքսանդր Մխիթարեանց: (Զրի): Տեսչական պաշտօնը այս տարի եւս կատարում էր պ. Մկրտիչ Արաբաշեանցն:

Այս տարին Ա. դասարանում սկսուեցաւ Ռուս լեզուի դասատուութիւնը, առարկայախօսութեան դասերին կցորդուելով շարունակուեցաւ հայրենագիտութիւն, որի մէջ ուշք էր դարձվում գլխաւորապէս աշխարհագրական տարրական գիտելեաց վերայ. եւ աւելացան գծագրութեան դասեր:

Տարուան ընթացքում Ա. դասարանից 1 իսկ Պատրաստականից 7 աշակերտութիւն անական պատճառներով թողին ուսումնարանը: Մնացածներից 7 հոգի աւարտեցին Սահականուշեանի համեստ ուսման ընթացքը եւ

եւ 17 հոգի փոխադրուեցան Ա. դասարան:

Գ. Հետագայ 1875/76 ուսումնական տարին նախկին ուսուցիչներից դասերը թողին Պ. Յարութիւն Տէր Սարգսեանց, Նազարէթ Նաւբանդեանց, Օր. Եւփիմէ եւ տիկին Եղիս. Արշակունի. սոցս փոխարէն դասեր յանձն առին պ. պ. Արտաշէս Յակոբեանց, Սարիբէգ Տէր Մելքիսեղեկեանց, Յովհաննէս Արգարեանց (այժմ Խորէն քաջանայ) եւ Ա. Եղեկեանց, ամենքն էլ ձրի: Իսկ Վարժուհի հրաւիրուեցաւ Օր. Սոփիա Սանդեանց, նոյնպէս ձրի եւ տեղափոխուեցաւ ծնողաց հետ միասին ուսումնարանի շինութիւնը. իսկ տիկին Փերրոնիա Տէր Մելքիսեղեկեանց, Վարժուհի Արզուսեան Օր. Աւսումնարանի, յանձնառու եղաւ երբեմն երբեմն այցելել ձեռագործի դասերը եւ խորհուրդներով օգնել Օր. Սանդեանցին, որ գեռ եւս անփորձ էր պաշտօնի մէջ:

Այս անգամ պ. Մկրտիչ Արաբաշեանցը դժուարութիւն յայտնեց շարունակելու տեսչական պաշտօնը, ուստի Վարչութիւնը յայտնելով իւր շնորհակալութիւնը նորա երկամեայ պաշտօնավարութեան համար՝ տեսչի պաշտօնը յանձնեց պ. Հայրապետ Ղուկասեանցին:

Աւսումնարանի մէջ աւանդելի առարկաները նոյնն էին. միայն հայրենագիտութեան դասերի բովանդակութիւնն, ըստ որոշման մանկավարժական ժողովոյ, աւելի ընդարձակուեցաւ. այսինքն բացի աշխարհագրականից աւելացան նաեւ տարրական գիտելիք բնագիտութիւնից եւ կենսագրական գրուցատրութիւնը նշանաւոր պատմական անձանց:

Տարուան սկզբում Ա. դասարանի մէջ կային 19 աշակերտութիւն, իսկ Պատրաստականում (երկու բաժանումները) 46. սորանցից 5 հոգի անական պատճառներով թողին ուսումնարանը:

Աւսումնական տարու վերջերը՝ հրապարակական հարցաքննութիւններից յետոյ՝ մանկավարժական ժողովոյ որոշմամբ 12 աշակերտութիւն աւարտեցին ուսումնարանի դա-

սընթացը, իսկ Պատրաստականի Բ. բաժանմանից փոխադրուեցան Ա. դասարանը 16 հոգի:

Վարչութիւնը տեսնելով, որ ինքը միջոց չունի Աւսումնարանի ուսման ընթացքը ընդարձակել, մտածեց Սահականուշեանն աւարտող չքաւոր աշակերտութիւններից աւելի արժանաւորների համար մի ճանապարհ գտնել իրանց ուսումն շարունակելու, ուստի 1876 թուի յուլիսի 8-ին գիմեց Արզուսեան Օր. Վարչութիւնը Հոգաբարձութեանը յետագայ գրութեամբ. — «Ի Սահականուշեան Օրիորդական դպրոցի յառաջին դասատան գոն ինն ընդունակ եւ բաւականաչափ պատրաստեալ աշակերտութիւն, որոց վասն թէ եւ կարի իմն հարկաւոր համարի բանալ եւ զայլ դասատուն, բայց եւ ոչ միով իւրք առ այդ ձեռնտու են միջոցը դպրոցին, իսկ արձակել զգոսա այդու եւ եթ ուսմամբ եւ կամ յայդմիկ դասատան եւս սահմանել կրկին բաժինս, որում անձեռնտու է նաեւ անձկութիւն տեղւոյն, զրկանք են մեծ եւ արգելք յառաջագիմնութեան նոցին եւս եւ վիշտ սրտիցս, ուստի վարչութիւն այնր դպրոցի այսու պարտք համարի խնդրել ՚ի Հոգաբարձութեանէդ բարեհաճի ազգասիրաբար որպէս ձրիավարժ ընդունել զնոսա յԱրզուսեան Օր. դպրոցի, եւ տալ զընթացս յառաջանալոյ նոցա ՚ի կարեւոր ուսմանս, որովհետեւ յաւելով զթիւ կրթեալ Օրիորդաց ՚ի չքաւոր դասակարգէ Հայ ժողովրդոց բազաքիս յաւելուլ նաեւ զարդիւնս եւ զպարծանս Արզուսեան դպրոցի: Առ յարգանս այսր ամենակարեւոր եւ ազգաշահ խնդրոյ վստահ գտնով բոլորովիմբ, ոչ անպատշաճ համարի Վարչութիւնս ընդ սմին առաջի առնել Հոգաբարձութեանդ եւ զանուանական ցուցակ վերտողեալ աշակերտութեանց գրեալ կարգաւ ըստ չափու աստիճանի ընդունակութեան նոցին վերուստ ՚ի վայր, յորոց են զարժանաւորն, եթէ պէտք իցին ՚ի դպրոցիդ, կարէ Հոգաբարձութիւնդ ըստ իւրում արժանազատու-

թեան համադասել ՚ի կարգս Արզուսեան որդեգրութեանց»:

Այս գրութեանն ՚ի պատասխանի Արզուսեան Վարչութեան մեծարգոյ Հոգաբարձութիւնը, նոյն թուի Օգոստոսի 3-ին, յայտնեց հետեւեալը. — «Ի Հոգաբարձութեանս լուան զգրութիւն Զեր, յՏուլիսի անցելոյ համարաւ 21, որով առաքեալ զանուանական ցուցակ ինն չքաւոր աշակերտութեանց Վարչութիւնը խնդրէր ընկալնուլ զնոսա յՕրիորդական դպրոցի Ղահրաման իշխանի, ՚ի թիւս ձրիաթոշակ աշակերտութեանց նորին ՚ի յարգանս բացատրեալ ՚ի գրութեան գորին հանգամանաց: Կարգաւորեցին, նախ՝ առ ՚ի յաւերժացուցանել զյիշատակ իշխան Ղահրամանայ՝ երկայնաբազուկ Արզուսեանց՝ ընկալնուլ յՕրիորդական դպրոցիս ՚ի թիւս աշակերտութեանց նորին զցուցակագրեալ ձրիաթոշակ աշակերտութեան Սահականուշեան դպրոցի թողնուլ զհոգացողութիւն հանդերձից եւ այլ ուսումնական պիտոյից վերջնոցս ծնողաց եւ բարերարաց նոցին. եւ երկրորդ՝ զվերոյգրելոցն այսու հաղորդագրութեամբ ծանուցեալ Վարչութեանդ Սահականուշեան Վարչութեան հրաւիրել զառաջարկեալ ինն օրիորդս ՚ի մէկն Սեպտեմբերի տարուոյս ընդ ձեռն միոյ յանդամնց իւրոց ամեալ յԱրզուսեան դպրոցն յանձնել միոյ ՚ի վերակացուացն, որոց պատուէր աւանդի առ այն ՚ի Հոգաբարձութեանէ»: (Իսկականի վերայ գրած):

Հոգաբարձուք՝ Կարապետ Անանիեանց, Ե. Յովհաննէսեանց:

Վարչութիւնը գոհութեամբ սրտի կարգաց այս հաղորդագրութիւնն եւ իսկոյն հարկաւոր կարգադրութիւնն արաւ յիշեալ օրիորդներին ուղարկելու Արզուսեան դպրոցն:

Գ. Աւսումնարանի բացման չորրորդ տարին, այն է 1876 թ. ուսման դասընթացի մէջ առանձին փոփոխութիւն չեղաւ: Բայց մի քանի փոփոխութիւններ եղան դասատու ուսուցչաց մէջ: Անցեալ տարուան դա-

սատուներէն ըստ մնարանը թողին պ. պ. Ղազ. Աղայեանց, Աւետիք Եղեկեանց (քաղաքից բացակայելու պատճառով) եւ Արտ. Յակոբեանց: Օրիորդ Սօփիա Սանդեանց նոյնպէս թողեց դասերը: Սոցա փոխանակ դասեր յանձն առան պ. պ. Ալ. Սիմէօնեանց, Աստուածատուր Խանգատեանց, (այժմ Խորէն քաջ. Մ. Ղարաքիլիսայում) եւ Վարոս Գեօնջեանց: (այժմ Մեսրոբ քաջանայ\*) Զեռագործութեան վարժուհու պաշտօնին՝ դարձեալ հրաւիրուեցաւ տիկին Եղ. Արշակունին, որ մի չափաւոր վարձ պիտի ստատար, միւսները յանձն առին ձրի ծառայել: Տեսչական պաշտօնը տարուան սզկբում վարում էր դարձեալ պ. Հայրապետ Ղուկասեանցը: Բայց սա 1877 թ. յունուարին յայտնելով՝ որ ազատ ժամեր չունենալու պատճառով շատ դժուարանում է իւր պաշտօնն արժանաւոր հսկողութեամբ շարունակել, ինդրեց ազատ կացուցանել իրան տեսչութիւնից: Եւ թէպէտ Վարչութիւնը հարկաւոր էր համարում, որ նա չթողու պաշտօնը, բայց երբ նա վերջնականապէս հրաժարուեցաւ՝ այն ժամանակ տեսուչ ընտրուեցաւ պ. Աղաբէգ Արշակունին, որ թէեւ նոյնպէս շատ ազատ ժամեր չունէր, բայց ուսումնարանի շինութեան մէջ բնակուելով

աւելի յարմարութիւն ունէր ՚ի մօտոյ հրակիւ ուսումնարանի ներքին բարեկարգութեան վերայ: Այս տարի Ա. դասարանի աշակերտուհեաց թիւն էր 20. Իսկ Պատրաստականինը 39, որոնցից 2 հոգի տարուան ընթացքում թողել էին ուսումնարանը: Տարեկան հրապարակական հարցաքննութիւններից յետոյ Պատրաստականի Բ. բաժանման աշակերտուհիներից 17 հոգի փոխուեցան Ա. Դասարանը. իսկ այս դասարանի 20 աշակերտուհիներից 17 հոգի աւարտեցին, որոնցից 6 ըն Վարչութեան կողմից առաջարկուեցան Արղութեան դպրոցի Հոգաբարձութեանն՝ նախընթաց ամի որոշման համաձայն եւ ըզուուեցան: Ե. 1877 թ. ինչպէս վերը յիշուեցաւ, վերջին Ռուս-թիւրքական պատերազմից յառաջացած դժուարութեանց պատճառով ուսումնարանը փակ մնաց: Գործի դժուարութիւնը գլխաւորապէս յարմարաւոր տուն չգտնուելն էր, թէեւ Վարչութիւնն գործ դրաւ ամեն հնարաւոր միջոցները: Զ. Պատերազմը դադարեցաւ: Թէպէտ այժմ էլ հեշտ չէր ամենեւին որեւիցէ յարմարաւոր տուն գտնելը, այսուամենայնիւ ուսումնարանն էլ չէր կարելի այս 1877 թ. ուսումնական տարին եւս փակ թողնել: Վարչութիւնը բաւականին թանգ վարձով հարկադրուեցաւ բռնել էլի առաջուան շինութիւնը: Ուսումնարանը բացուեցաւ սովորական ժամանակը, Սեպտեմբեր ամսին: Դասատուների կազմակերպութեան մէջ հետեւեալ փոփոխութիւնն եղաւ: Տիկին Եղիսաբէթ Արշակունին բոլորովին թողեց ուսումնարանը: Սորա փոխանակ Վարչութիւնը հրաւիրեց Արղութեան ուսումնարանի նախկին օգնական վարժուհի Տիկին Աշխէն Տէր Սարգսեանցին, որ տնով փոխադրուեցաւ ուսումնարանի շինութիւնը: Բացի ստորանից քաղաքից բացակայելու պատճառով դասերը թողին--պ. պ. Յովհաննէս Արգարեանց եւ Աստուածատուր Խանգատեանց,

\*) Պ. Վարոս Գեօնջեանցն 1876 թ. Մարտից մինչեւ ուսումնական տարու վերջն եւս դաս տուաւ ուսումնարանի մէջ՝ փոխանակ Պ. Ղազ. Աղայեանցի, երբ այս վերջինն ընտանեկան հանգամանքներից ստիպուած՝ բոլորովին թողեց Աղէքսանդրապօլ եւ գնաց Թիֆլիս: Նոյնպէս է փոխանակ պ. Արտ. Յակոբեանցի, որ նոյն ժամանակն անձնական պատճառներով թողեց դասերը: Պ. Գեօնջեանցն իւր աւանդած դասերի համար ստանում էր չափաւոր ուձիկ. իսկ ներկայ թուականին Վիճակային Դպրոցի Հոգաբարձութեան եւ Սահականուշեան ուսումնարանի Վարչութեան մէջ կայացած համաձայնութեամբ, որով նոյն Վարչութեան անդամներից ոմանք աւելի դասեր էին յանձն առած Վիճակային Դպրոցում: Պ. Գեօնջեանցն իւր ուձիկը պիտի ստանար յիշեալ Դպրոցի Հոգաբարձութիւնից:

իսկ նոր դասեր յանձն առին Մինաս քաջանայ Տէր Պետրոսեանց, Այգալարգ Ասլանեանց եւ Ամիրան Մադինեանց: Այս ուսումնական տարին ուսումնարանը տեսուչ չկարողաւ ունենալ եւ կառավարուեցաւ Մանկավարժական խորհրդի հսկողութեամբ: Աւանդելի առարկայից ծրագրի մէջ ոչինչ փոփոխութիւն չէ եղած. միայն Ա. դասարանում մնացող եւ նոր փոխադրուած օրիորդների զարգացման մէջ Ռուս. լեզուից տարբերութիւն լինելով՝ նոյն դասարանի աշակերտուհիք երկու բաժանումների բաշխուեցան, որոնցից իւրաքանչիւրի ուսուցիչ չը զատ էր: Տարուան սկզբում Ա. դասարանում կային 14 աշակերտուհի, սոցանից մինը տնական հանգամանքներով թողեց ուսումնարանը, իսկ Պատրաստականում կային 64 աշակերտուհիք, որ մնացին մինչեւ վերջը: Տարեկան հրապարակական հարցաքննութիւններից ժողովոյ որոշմամբ Ա. դասարանի 13 աշակերտուհիներից 10 հոգի աւարտեցին ուսման ընթացքը որոնցից 7-ին Վարչութիւնն առաջարկեց Արղութեան Օր. Դպրոցի Հոգաբարձութեանն՝ նոյն դպրոցն ընդունուելու համար. իսկ Պատրաստականի 64 աշակերտուհուց փոխուեցան Առաջինը 31 հոգի: Միեւնոյն ժամանակ Վարչութիւնը մտածում է, որ ուսումնարանի միջոցներն այժմ փոքր ՚ի շատէ կը ներեն ուսումնական ծրագիրն ընդարձակելու մի դասարան աւելացնելով, կարելի կը լինէր ընդունելի աշակերտուհեաց թիւն էլ շատացնել: Այս մասին երկար խորհրդածելով՝ Վարչութիւնն եկաւ այն եզրակացութեան, որ առ այժմ բարձրացնէ դասարանների նշանակութիւնը՝ աշակերտուհեաց զարգացման չափն եւս համապատասխան անելով դասարանների նշանակութեան: Ըստ այսմ որոշուեցաւ Պատրաստականին յաջորդող դասարանից կազմել Պատր. Դասատ. երկրորդ բաժին--նոյն

դասերի համար աւելի շատ պատրաստութիւն ունեցող աշակերտուհիներով, քան թէ անուանել նորան Ա. դասարան, ուր լինէին փոքր պատրաստութեամբ աշակերտուհիներ: Իսկ գալոց ուսումնական թուականին, եթէ կողմնակի արգելաութիւններ չեն պատահել՝ աւելացնել մի դասարան եւս, որ այն ժամանակ կը կազմէ Ա. դասարանը: Ե. Այս եօթներորդ ուսումնական տարին 1878 թ. ուսումնարանը պէտք է փոխադրուէր ուրիշ մի այնպիսի շինութիւն, ուր երկու մեծ սենեակ լինէին, պատրաստական դասարանի երկու առանձին բաժինների համար: Վարչութիւնը շատ թանգ գնով վարձեց Կար. եւ Տիգ. Տիգրանեանների տունը, որ թէեւ աւելի ընդարձակ էր, քան առաջուան տունը, բայց դարձեալ մեծ անյարմարութիւններ ունէր: Ներկայ թուականին՝ նախկին ուսուցիչներից դասերը թողել էին քաղաքից բացակայելու պատճառով Պ. Պ. Ա. Մանգինեանց, Այգ. Ասլանեանց եւ Ալ. Սիմէօնեանց, նոյնպէս եւ Վարոս Գեօնջեանց: Սոցա փոխարէն յանձն առին ձրի դասեր Պ. Պ. Գեղամ Տէր Պետրոսեանց, Գրիգ. Շահբաղդեանց, Գ. Բունիաթեանց եւ կրկին Յարութիւն Տէր Սարգսեանց, իսկ վարձով Պ. Ալէք. Մխիթարեանց: Բացի սորանից աւելացան Վարժուհիների թիւն եւս: Պէտք է ասել, որ նախընթաց 1877 թ. ուսումնական տարին Ալէքսանդրապօլու Արղութեան Օր. դպրոցի համար ըստ ուսումնականին ամենարդիւնաւոր տարիներից մէկն էր: Այդ թուականին աւարտեցին յիշեալ Դպրոցը գոհացուցիչ պատրաստութեամբ բաւականաթիւ օրիորդներ, որոնցից մեծ մասը յետագայ տարին մտան ծառայելու ոմանք Արղութեան, ոմանք Սահականուշեան եւ մէկը Կարուց Օրիորդական դպրոցները: Այսպիսով ահա նոցանից չորս հոգի Վարչութեան խնդրանօք Սահականուշեանը մտան ձրի ծառայելու դասարանաց կարգապահ եւ օգնական Վարժուհիների

պաշտօնով. այն է՝ Օրիորդը Վեր. Բազազեանց, Հայկանդուխտ Արաբաջեանց, Փերրոնիա Աջամեանց եւ Հռիփսիմէ Աղաջանեանց: Սոցանից Օր. Բազազեանցն յանձն առաւ եւ Հայոց Վայելչագրութեան դասեր:

Տարուան սկզբում (Սեպտեմբերի 4) օրագրական որոշմամբ Վարչութիւնը խնդրեց Վիճակային Հոգեւոր եւ Արդութեան օր. դպրոցների տեսուչ Պ. Աբխտղոս Յովհաննիսեանցին, Սահականուշեանում եւս յանձն առնուլ տեսչի պաշտօնը, որեւ համաձայնեցաւ ուրախութեամբ:

Աւանդման առարկաները սովորականն էին, միայն սոյն տարի, իբրեւ օժանդակութիւն Հայոց լեզուի, երկու դասարաններումն էլ աւելացան «Կրթական Վիպակօսութեան» առաձին դասեր:

Տեսչի առաջարկութեամբ եւ Վարչութեան հաւանութեամբ փոխուեցաւ աշակերտուհեաց միաթիւրթ վկայականների ձեւն եւ որոշուեցաւ տալ դոցա փոխանակ տպագրած տետրակներ, որոց մէջ բացատրուած էին աշակերտուհեաց եւ նոցա ծնողաց պարտաւորութիւններն: Տետրակների մէջ պէտք է նշանակուէին եւ երկամսեայ թուանշաններ յառաջագիմութեան եւ բացակայութեանց, ինչպէս եւ նախկին վկայականների մէջ:

Տարուան սկզբում բոլոր աշակերտուհեաց թիւն էր 94, որոնցից 33 Բ. Պատրաստականում, իսկ 61 Ա. պատրաստականում էին: Սոցանից տարուան ընթացքում տնական պատճառներով Բ. պատրաստականից ելան 4 աշակերտուհիք:

Տարեկան հրապարակական հարցաքննութիւններից յետոյ Մանկավարժական ժողովոյ վճռով Ա. պատրաստականից Բ.—ը տեղափոխուեցան 26 հոգի. իսկ Բ. պատրաստականից փոխուեցան Ա. դասարան 12 հոգի:

Ուրեմն այս տարի իրագործուեցաւ Վարչութեան անցեալ թուականի որոշումն՝ մի դասատան աւելացնելու վերաբերմամբ, թէ եւ այս նորաբաց դասարանը դարձեալ կո-

չուեցաւ Առաջին, ըստ որում նախկին Ա. դասարանն՝ անցեալ տարուան որոշմամբ կոչուել էր Բ. Պատրաստական:

Ը. Այս 1880—81 ուսումնական տարին քաղաքից բացակայելու պատճառով թողեց դասերը Պ. Գրիգոր Շահբուդաբեանցը նոյնպէս եւ Պ. Աղէքսանդր Միթարեանց եւ Օրիորդը — Հռիփսիմէ Աղաջանեանց, Փերր. Աջամեանց եւ Հայկանդուխտ Արաբաջեանց: Սոցա փոխանակ ձրի դասեր յանձն առին Պ. Խաչատուր Դիլանեանց: Ռոճկով հրաւիրուեցան Պ. Ներսէս Շահլամեանց եւ օր. Գայիանէ Թաղլերանեանց: Օր. Վեր. Բազազեանցին նոյնպէս մասնաւոր ռոճիկ նշանակուեցաւ:

Տեսչի պաշտօնը դարձեալ շարունակում էր Պ. Աբխտղոս Յովհաննիսեանցն: Ուսումնարանի դասընթացը սովորական էր:

Տարուան սկզբում ուսումնարանի մէջ կային ընդամենն 122 աշակերտուհի, սրանցից Ա. դասար. 12 հոգի, Բ. Պատրաստակ. 50 եւ Ա. Պատրաստ. 60: Սոցանից թողին ուսումնարանը՝ Պատրաստականի բաժիններից 4 հոգի, իսկ Ա. դասարանից 1:

Հրապարակական հարցաքննութիւններից յետոյ Մանկավարժական ժողովոյ վճռով Ա. դասարանի բոլոր 11 օրիորդներն աւարտած համարուեցան ուսման ընթացքը. Բ. Պատրաստականից Ա. դասարան փոխադրուեցան 28 հոգի, իսկ Ա. պատրաստականից Բ.—ը 22 հոգի: Աւարտողներից 5 օրիորդք՝ Վարչութեան առաջարկութեամբ ընդունուեցան Արդութեան Օր. Դպրոցը:

Ք. Այս իննորդ տարին, այն է 1881/82 թ. աւանդելի առարկաների եւ ուսումնական ծրագրի մէջ ոչինչ փոփոխութիւն չեղաւ: Եւ ըստ որում՝ ցանկութիւն յայանող վարժուհացուներ կային՝ որոշուեցաւ դարձեալ ամեն դասարանի մէջ մի կարգապահ վարժուհի կարգել:

Անցեալ տարուան ուսուցիչներից դասերը թողին Պ. Խաչատուր Դիլանեանց՝ քաղաքից հեռանալու պատճառով. եւ Պ. Պ. Աղաբէգ

Ամիրեանց, Գ. Բունիաթեանց եւ Մակար Տէր Սարգսեանց ազատ ժամեր չուենալու պատճառով: Սոցա փոխարէն դասեր յանձն առին Պ. Պ. Գրիգորիս Երզնկեանց, Ստեփան Վեհապետեանց եւ Կարապետ Առաքելեանց: Կարգապահ Վարժուհու պաշտօն յանձն առին օրեորդք՝ Փիլերոնիա Աջամեանց եւ Շողակաթ Չարխանեանց: Բացի սորանից Ռուս լեզուի դասատուի պակասութիւն զգալով՝ Վարչութիւնը խնդրանօք դիմեց օր. Շուշանիկ Անդրէասեանցին (ուսուցչուհի տեղական օր. Պրոգիմնագիտոնի) որ եւ յանձն առաւ յօժարամտութեամբ:

Նաեւ՝ որովհետեւ Պ. Աբխտղոս Յովհաննիսեանցը բոլորովին պաշտօնով տեղափոխուել էր Քիֆլիս՝ ուստի Վարչութիւնը Հոկտեմբերի 20 օրագրական որոշմամբ հրաւիրեց տեսչական պաշտօնի համար բժիշկ Գաբրիէլ Յովհաննիսեանցին, որպիսի հրաւերը պարօնն ընդունեց մտադիւրութեամբ:

Ուսումնական տարուան սկզբում ուսումնարանի աշակերտուհեաց թիւն էր—135 որոնցից 29 հոգի նոր էին ընդունուել: Գոցանից 28 աշակերտուհի Ա. դասարանումն էին, 45-ը Բ. Պատրաստականում եւ 62 ը Ա. Պատրաստականում: Տարուան ընթացքում պակասեցան Ա. դասարանից 4 հոգի. Պատր. դասարանից 2 հոգի մահուան պատճառով, եւ 5 հոգի նոյն դասարանից տնական հանգամանքներով: Տարեկան հրապարակական հարցաքննութիւններից յետոյ, Մանկավարժական խորհրդի որոշմամբ Ա. դասարանի 24 աշակերտուհիներից 15-ն աւարտեցին ուսման ընթացքը, որոնցից 7 հոգու համար Վարչութիւնը գրաւոր հաղորդագրութեամբ միջնորդեց Արդութեան Օր. Դպրոցի Հոգաբարձութեանը՝ նոյն զրպրոցին ընդունելու նոցա, որք եւ ընդունուեցան: Բ. Պատրաստականից Ա. դասարանը փոխադրուեցան 22 հոգի, իսկ Ա. Պատրաստականից II կարգից փոխադրուեցան Բ. Պատրաստականը 21 աշակերտուհի:

Ճ. Այս վերջին տասներեորդ տարին ու-

սումն կարելի եղաւ սկսել միմիայն՝ Նոյեմբեր ամսոյ կիսին, ըստ որում ուսումնարանը պիտի տեղափոխուէր իւր սեպհական շինութեան մէջ, որ կառուցուեցաւ «Ս. Նշան» եկեղեցու հարաւակողմում. իսկ այդ շինութեան մէջ քանի մի հարկաւոր լրացումներն ուշացան մինչ այդ ժամանակ: Թէ հին աշակերտուհիներն թէ նոր խընդրատուք՝ Վարչութեան հետ անհամբերութեամբ սպասում էին նորակառոյց ուսումնարանի բացման: Վերջապէս հասաւ օրը: Նոր խնդրատուների թիւը հասնում էր 91: Վարչութիւնը չգիտէր թէ ինչպէս պէտք է բաւականութիւն տայ այդչափ ուսումնախնդիր մանկանց: Ի վերջոյ, ըստ որում խնդրատուների ամենամեծ մասն անգրագէտներ էին, ինչպէս եւ սովորաբար, բարւոք համարեց Ա. պատրաստականին մի զուգրնթաց բաժին եւս աւելացնել: Այս բանի համար ուսումնարանի շինութիւնը թէեւ յարմարութիւն ունէր, բայց դասատուի պակասութիւն կար, իսկ Վարչութիւնն ոչինչ նիւթական միջոց չուէր ռոճիկով ուսուցիչ հրաւրելու: Վերջապէս ոյս գժուարութեան առաջն էլ առնուեցաւ եւ յիշեալ զուգրնթաց բաժինը բացուեցաւ, որով եւ կարելի եղաւ 91 խնդրատուներից ընդունել 45 հոգի:

Այսպէս ուրեմն ներկայ 1882/83 ուսումնական թուականին ուսումնարանը բաղկանում է մէկ պատրաստականից եւ մէկ հիմնական դասարանից (Առաջին). Պատրաստականը բաժանուած է երկու՝ իրարից միամեայ դասընթացով բարձր մասերի, իսկ սոցանից առաջինն ունի մի զուգրնթաց բաժին եւս. եւ սոքա ամենքը զետեղուած են չորս առանձին սենեակներում—երկու դահլիճում, երկու փոքր սենեակներում\*):

Ծանոթութիւն. Գասարանների գիրքն առողջաբանական պահանջմանց կետից կարելի է գոհացուցիչ համարել: Երկու դահլիճերը վերջին և ստորին (Պատր. դասարանի I և II բաժանումներն) ունին 4—4 արևմտահայեաց և 3—3 արևելահայեաց

րոյ չէր կամենում յանձն առնուլ, բայց զիջանելով Վարչութեան խնդրանաց, ըստ որում սեւ էլ որ ընտրէին՝ նոյն գծուարութիւնները պիտի յառաջ գնային, համաձայնուեցաւ կատարել տեսչի պաշտօնը:

Աշակերտութեաց թիւը դասարանների մէջ այսպէս էր տարուան սկզբը. Ա. դասարանում 31 օրիորդ, Բ. Պատրաստականում 48. Ա. Պատրաստականի II բաժանում 31, իսկ I բաժանում 42. Ընդամենն 152 հոգի: Սոցանից մինչեւ Մայիսի 20-ն պակսել են 10 հոգի: Ուրեմն այժմ աշակերտութեաց թիւն է 142:

Նախկին ուսուցիչներից դասերը թողած էին Պ. Պ. Գրիգորիս Երզնկեանց, (քաղաքից բացակայելու պատճառով) եւ Ստեփան Վեհապետեանց, նաեւ Օր. Շ. Անդրէասեանց: Հեռացել էին նոյնպէս օր. օր. Փերրոնիա Աջամեանց, եւ Շ. Զարիսեանց: Նորից դասեր յանձն առին Պ. Պ. Գարրիէլ Տէր Գարրիէլեանց, Մկրտիչ Տէր Մարտիրոսեանց, Աբրահամ Բարայեանց, Ղազար Ղազարեանց եւ դարձեալ Մակար Տէր Սարգսեանց:

Ուսումնական ծրագրի մէջ ոչինչ փոփոխութիւն չեղաւ:

Մեծ ու լուսառատ պատուհաններ: Ա. դասարանն եւ Պատրաստականի I բաժանման զուգընթաց մասն ունին միայն 3-3 արևելեան պատուհաններ: Նրատարանների դասաւորութիւնն այնպիսի է, որ լուսոյ անկումն ձախ կողմից է. իսկ դահլիճերում՝

Ուսումնարանի տեսուչ բժիշկ Գարրիէլ Յովհաննիսեանցը նոյն իսկ ուսումնական տարու սկզբից խնդրում էր ազատ կացուցանել իրան տեսչի պարտականութիւնից, պատճառելով ազատ ժամերի սակաւութիւնն, որ դժուարացնում էր իւր պաշտօնավարութիւնն ըստ խզճի մտաց: Վարչութիւնը թէեւ այսուամենայնիւ նորան յարմար ճանաչելով տեսչի պաշտօնի համար՝ խնդրում էր շարունակել յիշեալ պաշտօնը գէթ մինչ տարու վերջը, բայց որովհետեւ Պ. Յովհաննիսեանցն անկարելի էր համարում այդ իրան համար, ուստի ներկայ 1883 թուի Յունվարի ամսոյ 3-ն կայացած ժողովի մէջ Վարչութիւնը շնորհակալութիւն յայտնելով նախկին տեսչին՝ ընտրեց նոյն պաշտօնի համար Պ. Հայրապետ Ղուկասեանցին, բայց ըստորում եւ սա չնայելով Վարչութեան խնդրանաց յանձն չառաւ, նոյնպէս ժամանակի սղութեան պատճառով անհնարին համարելով ըստանձնած պաշտօնի արդիւնաւորութիւնը, ուստի Վարչութիւնը նոյն պաշտօնի համար ընտրեց Մինաս քահանայ Տէր Պետրոսեանցին, որ թէ պէտ եւ նոյն վերոյիշեալ պատճառներ

